Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-298[2]-6.04.2018-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
	ԱԺ պատգամավորներ՝ Խոսրով Հարությունյան, Արայիկ Գրիգորյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը լրացնել նոր 5-րդ կետով. Օրենքի 20.1-րդ հոդվածի 2-րդ մասից հետո լրացնել նոր 2.1-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝ «Եթե իրավաբանական կամ ֆիզիկական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը միաժամանակ իրականացնում են «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մաս աղյուսակի «4. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ» բաժնի 1-ին և 1.1-րդ կամ 8-րդ և 8.1-րդ կետերում նշված գործունեության տեսակները, ապա այդ գործունեության տեսակների իրականացման իրավունք ձեռք բերելու համար վճարում են սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կամ 11-րդ կետերով սահմանված բազային տուրքի 15000-ապատիկի չափով տարեկան պետական տուրք:»:	Ընդունվել է	Ընդունվել է